

# Φ U E H Q

Հարգիւ ամեն ուրբար օրեւ հրատակի.  
Տառեկան զինքն է Փարիզի համար. 15 Ժ.  
Տառեկատանի, Ալատիոն, Անգլիոն. 18  
Ռուսատանի եւ Պարսկատանի. 23  
Ամերիկայի եւ Հնդկատանի . . . 28

## ԴԱԳԻԲ ՇԱԲԱԹ ԱԿԱՆ

Առաջընթիւններ առելիս պահից մասին :  
Նաև եւ գործիքներ պէտք է ուղղին  
այս օրինակ հասցէի : A. Mourad,  
rue Saint-Sulpice, 38, à Paris.  
Զիմանցի համարներ պիտի մերժին :

ՓԱՐԻԶ 15 ՅՈՒՆՎԱՐ

Իւսալական խնդրոյն վերջ մի տալոյ եւ  
նորա անկախութիւնը հաստատելոյ, միան-  
գամայն պապական կառավարութեան  
օրինաւոր սահման մի դեելոյ համար,  
դեսպանաժողով մի պիտի գումարվէր ի  
մայրաքաղաք ամսոյ 28ին . ուր մէծ  
Տէրութեանց երեսփոխանեերը միաբան  
խորհրդակցելով լիւեալ կարեւոր կարգա-  
դրութիւնները պիտի լիսկին , զանալով  
նաև որ Եւրոպիոյ խաղաղութիւնը հաս-  
տանուն հիմանց վերայ կայանայ :

Սակայն, գրեք տարւոյս սկիզբեն ի  
վեր լուսիլ սկսաւ թէ դեսպանաժողովի  
գումարումը պիտի ուշանայ, եւ մինչեւ  
անգամ ումանի գուշակին թէ բնաւ չպիտի  
գումարի, իբր թէ այս վերոյիշեալ օրինա-  
ռոր կարգադրութիւններն առանց դես-  
պանաժողովի ալ կարելի է ի գործ դրվիլ։  
Ինչպէս անզիխական Մօրենիկ փօսր լրա-  
գիրն առեր, որ առանց դեսպանաժողովի  
ալ իսալիս ազատ պիտի լինի։ Եւ վերջա-  
պէս նոյն լրագիրն ամսոյս 7ին հաստատել  
սկսաւ թէ դեսպանաժողովը չպիտի գու-  
մարի։

Սորա հաստառության կրնայ համարվի  
այն լրեր, որ Անքօնեկի կառտինալը եւ  
Կորչանի իշխանը, որոնց առաջինը Հք-  
ռովմայ եւ վերջինը Մուսիոյ կողմանէ ե-  
րեսփոխան որոշուած էին գումարվելիք  
դեսպանաժամունութիւն, պատուեր ընդուներ  
են, որ իրենց դեպ ի Փարփակ նամբայ ելլեն  
ուշացնեն :

Այսու ամենայնիւ դեռ որու չփացըրվիր,  
քէ առանց դեսպանաժողովի, ինչ ըն-  
թացքով այս խնդրոց լուծումը պիտի կա-  
տարվի: Միայն այս յայտնի է որ Պատ եւ  
Դեսպանաժողով անուն էեւրն իւր նազա-  
տիկին պիտի հասնի, եւ Վահկվսի կոմ-  
սին պատօնե հրաժարիլը նորա գործա-  
դրութեանը մեծ դիւրութիւն մի համարեն:  
Անզինոյ օրագիրներն ալ շատ համա-

նուրի և ցուցին այս պատօնեկին փոխուելովն վերայ :

Սպանիացոց բանակեն առնուած լր-  
րեր դեռ նշանաւոր գործողութիւն մի չեն  
ծանուցանեւ : Բանակը միշտ յառաջ բա-  
լեր Թէրուանի համբուն վրայէն առանց  
Մարօներէն ընդդիմութիւն կրելոյ : Սա-  
կայն ամսոյն 4ին Մարօները 4 հազար  
հոգուով սպանիացոց վրայ յարձակեր եւ  
սկսե են սաստիկ կրակ ընել . բայց սպա-  
նիացոց թնդանօրները ուտուով Մարօնե-  
րուն կրակը խափանեւ են : Այս պատե-  
րազմէն թնամուոյն ունեցած կորուսքը չէ  
պատմուած , իսկ սպանիացիք թնդամենը  
5 մեռեալ եւ 19 վիրաւոր ունեցեր են :

Տանկաստանէն եկած վերջին լրերը ծա-  
նուցանեն Գրադրզը Մէհմանէշիաւային  
պատօնն հանվիլը, և նորա տեղը Մէհմա-  
նէշ-Ռիւչի փաւային մէծ Եպարքու, ու  
Ահմէշ-Վէֆի էթենտին ալ մայրաբաղ-  
ձիս օսմանեան դեսպան անուանիլը :  
Գաղիոյ օրագիրները լիաբերան գովեն  
Վեհափառ Սուլթանին այս խոհեմ կար-  
գագրութիւնը. և բանի որ ասկէց յառաջ  
օսմանեան տերութիւնը խախուտ հիման  
վերա կեցած հօմարելին, այժմ սկսան

մեծ Եպարքու : Ահա այսպիսի անձի մը  
լրւսաւոր մտաց արդեամբը օսմանեան  
կառավարութիւնը պիտի կարողանայ իւր  
խնայութեանը կարգադրութիւն ըստ ար-  
ժանուոյն ի գործ դնել եւ իւր զարգացմեն  
ապահովցնել :

Հետեւարա մեք ալ պիտք է յուսամք ,  
որ օսմանեան Տեղուրինն իւր կառավա-  
րութեան սահնձը այսպիսի լուսաւորեալ  
անձանց ձեռքը յանձնելով ինքն ալ Եւր-  
պիոյ լուսաւորեալ Տեղուրիանց կարգն  
անցնի , եւ իւր ժողովրդեան բարեկեցու-  
րինը Տօնօրինէ , որևէ այն ժողովուրդը  
մինչեւ զարդ զուրկ մնացած է :

Սիւէզի պարանոցը բացուելոյ խնճրոյն  
լուծումը նորբնիք Եպարքոսին խոհակա-  
նութեամբ դիւրութեամբ կատավելոյն  
մէծ ապահովութիւն ցուցանեն զայփա-  
կան օրագիրք :

ԱՅԼԻՆ ԱՅԼԻՆ

Մօնիք կուր ծանուցանէ, թէ Վալէվսին  
կոմսին հրաժարականն ընդունուելով՝  
նորա տէղը Կ. Պօլայ Գաղղիոյ զևսպան  
Պ. Թումել' առատարին գործոց ուաշ-  
տօնեայ կարգեցաւ։ Եւ մինչև Պ. Թումելին  
հոս ծամանելը, հոյն պաշտօնը Պ. Պառօշ  
պիտի վարէ առաւմանակեայ՝ կերպիւ։

Ասէն թէ, Հռովմի գաղիական զես-  
պան Կուամօն զուբսո՞ւ Պ. Ֆուլինէլի տեղ  
Պօլսոյ գաղիական դեսպան պիտի ըն-  
տառեւ :

— Մէր Բանասիրականին մէջ զրված Նոր  
Յունատանի Դիցազութերը անունովյօդուա-  
ծը, որ զաղաքեալ Արևամուսք օրագոյն  
մէջ ճրատարակիլ սկսուած էր, մէր առզին  
օրինակ - առնելոյ արժանի պատմութիւն  
մի լինելով, որոշեցինք նորա շարանակու-

Թիսնը լրազրոյս միջոցաւ կատարել, ինչ-  
պէս Գիտնական Թարգմանիչն ալբաղձար:

— Երկրագործ մի իւր ցորեննոցի մկնե-  
րէն ամեն տարի ամքաւ վկաս կրելով՝  
վերջապէս հետեւալ հնարքը գտեր է այս  
վկասարար կենդանիներէն աղատելոյ :  
Բուռ մի (պիր ավուն) փեզենայ (սէտէփ  
օթու) ըսուած խոտէն շուքի մէջ չորցնե-  
լէն յետոյ ցորենի շտեմարանը դրեր է :  
Այս խոտին միայն հոտը զիրենք փախցնե-  
լէն ի զատ՝ ուտողներն ալ սատկեր են .  
որով երկրագործ բոլորովին աղատեր  
է այս կենդանեաց տուած անհամար  
վկասէն :

— Վերջին Խոտիոյ պատերազմին ժա-  
ռանակը, խոտալցոց գաշնակից գաղի-  
ացի զօրքերը ձենօվա օշարակավաճառ-  
ներուն իրենց խմած ըմպելիքին զինը  
վճարել ուղած ժամանակնին շատ անգամ  
անոնք իրը երախտագիտութեան նշան  
նոյն զօրքերէն ստակ չէին առներ : Պատ-  
մեն թէ այսպէս Վէնսէնի որարդ ըսուած  
զինուոր մի, երբ իր խմած մէկ զաւած  
օղիին զինը սլիտի վճարեր, ըսաւ անոր  
օշարակավաճառը :

« Փոխանակ ինձի ստակ տալոյ, աւըս-  
տրիացի զերի մը բեր :

« Եթէ ալդակէն է, պատասխանեց զի-  
նուորը, լեցնու ուրեմն ուրիշ զաւած մի  
և, խօսք տամքեղ երկու գերի բերել : »

— Գոտպէրի մերձակայները մշակ մի,  
իրեն հետ ուժերնին բաղդատել ուղողնե-  
րուն ամենն ալ ըմբշամարտութեան մէջ  
յաղթած լինելով, գաւառին ամենէն ուժեղ  
մարդը համարուած էր : Այս մշակն ան-  
ցեալներն իւր պարտէզին մէջ աշխատած  
ժամանակը, յանկարծ օտարական մի  
պարտէզին դուռը բանալով ներս մտանէ,  
և պարտէզպանին ասէ :

« Զեր չափաղանց ուժեղութեան համ-  
բաւը լսելով՝ քսան մղոն հեռիէն եկայ զայն  
անձամբ ստուգէլոյ թէ պատմուածք ճիշդ  
է և թէ որերնիս յաղթող պիտի լինիմք  
ըմբշամարտութեան մէջ : »

Մեր մշակն առանց պատասխան տա-  
լոյ, օտարականին մէջըէն բոնելն ու պար-  
տէզին պատին վրայէն մերձակայ դաշտը  
նետելը մէկ կընէ :

Խեղճը հազիւ անվտանգ աղատելով,  
առանց վերստին պարտէզ մտնել հա-  
մարձակելոյ պատին միւս կողմէն « Նը-  
նորհակալ Էմ, ասկէց աւելի փորձ չեմ ու-  
ղեր » անէ, ու երթայ :

— Հակր քաղաքը զիշեր մը երկու գո-  
ղեր երիտասարգի մը տուն մաեր են, որն

որ կնոշն ու իրենց մանկանը հետ միայն  
գտնուէին խոր քնոյ մէջ ընկղմէալ : Գո-  
ղերը իրենց չար կամքը աղատութեամբ ի  
գործ դնելոյ համար խորհին երախսայն  
վերցնել և տնէն քանի մը քայլ հետի բաց  
տեղը զնէլ : Որ երբ տղան լայ ծնողքն  
անոր աղատակին դիմէն ու իրենք նոյն  
միջոցին կարող ըլլան աղատարար ծան-  
րագին նիւթերը վերցնելով փախչէլ :  
Խորհուրդնին ի գործ դնելով քիչ մը  
հեռանալուն ետքը, տղան սկսեր է լալ,  
և ծնողքն արթնալով մանկան ձայնին  
փութով դիմէրեն : Նոյն կէտին աւաղակ-  
ները տունն առանձին գտնելով ներս մտեր  
և սկսեր են իրենց չար դիմէարութեան  
մնացորդը զլուս հանելոյ զբաղիլ բաց  
հազիւ թէ քանի մը բան ժողվարեն էին,  
մէկէն տունը չարագործներուն վրայ վկչ-  
լով՝ զանոնք իր տակը թաղեր է : Իսկ  
տանը տէրերն իրենց տղան առնելոյ հա-  
մար տնէն դուրս ելած լինելով ինին այս  
կործանումէն անվնաս աղատեր են :

— Հետեւակը մայրաբաղաքիս լրազիր-  
ներէն մէկը գրած է :

« Ամեն մարդ զիտէ որ, Անզգիոյ մէջ  
կին ծախուառնեն. վասնգիբանի որ այրեր  
կան իրենց կինը շուկան վաճառող, հար-  
կաւ գնողներ ալ պէտք է լինին . բայց չե-  
նք զիտեր թէ տղայը ծախողներ ալ  
գտնուէին : Այս միջոցիս Լիվրուու կին մը  
իր ծառային և ստուուին հետ ի միասին  
շուկան զացեր և որդին ծախող կնող մը  
Յանզինական լիրայ վիճարելով զայն գներէ :

— Օրոց փոփոխութեան նշաններու  
վրայ հետեւակ զիտողութիւնները մշակնե-  
րու լրազրին մէջ կարգացինք :

Եթէ կանդելին լուսը փողփոխի կամ  
սունկի ծև առնէ, անձրեկոյ մէծ հաւանա-  
կանութիւն կայ :

Նոյնը նշանակէ դարձեալ՝ եթէ ծխա-  
համքներէ (պահա) մուրերը (գուրում)՝  
քակուելով թափուին :

Եթէ խայրոյկը (քէօզ աթէշ) սովորա-  
կունէն աւելի շէկ (զըզը) լինի և բոցն  
աւելի յուղեալ երեի, հովի նշան է :

Երբ բոցն ուղիղ ու հանդարտ է, գեղե-  
ցիկ օղի նշան է :

Եթէ մէկը հեռուէն զանգակին ձայնը  
լոէ, (որ սովորաբար չէր լսուէր), այն  
հովի կամ օգոյն փոփոխութեան նշան է :

Եթէ աղնիւ կամ զէշ հոտերը՝ սովորա-  
կանէն աւելի սաստիկ լինին, անձրեի  
նշան է : Հովի յաճախ փոփոխութիւնն  
ալ մրրիկ (սուուա) նշան է :

Եթէ աղը, մարմարինը, երկամն ու

ապամկին տամկանան (նէմիչնմէք) և պա-  
տուհաններուն ու դռներուն փայտերը ու-  
սուն, անձրեի կամ սառոյցներուն հալելոյ  
նշան է :

Այս հովերն որ ցերեկին սկսին փէտէ,  
աւելի սաստիկ ու երկար տեսն, քան թէ  
անոնք՝ որ զիշերն սկսին :

— Ամիչն քաղաքին (Գաղիոյ մէջ)՝  
շրջականները, պառաւ կին մի անբուժելի  
հիւանդութեամբ անհանդուրժելի կերպիւ  
տառապելով՝ որոշեր է որ անօթութեամբ  
ինքինը մեռցնէ : Այս ձախորդ որոշ-  
մունքն ի գործ դրեր է, և իր զաւակացն  
աղաչանքն ու ընդդիմութիւնը կարող չէն  
եղած դայն արգիլել :

— Անցեալները տան մը պահապանը  
կէսփերուան ժամանակ տանը վերին  
յարկէն բոցի շողիւն մի տեսեր և զայն  
հրդենի սկզբանառութիւն կարծելով՝ ան-  
միջապէս քաղաքապահ զօրքի մը իմաց  
տուեր և ի միասին լոյսն երեցած տեղը  
զիմէր են, ուր Թէ. Տ..... անուամբ ԾԿ  
տարեկան բեռնակիր մի բնակէր : Այս  
անձը լաւ մի զինովնալէն յետոյ տուն  
մտած էր, և սաստիկ մսած լինելով տաք-  
նալ ուղեր էր. բայց սենեկին մէջ ոչ վառա-  
րան ոչ փայտե ոչ ածուս կար: Գիսովները  
հնարագէտ են: Ուստի մէր բեռնակիրն  
ալ ուրիշ ճար զտնելով սենեկին կան կա-  
րասին մէշտեղը զիգեր և բոնկցուցեր էր  
զանոնք որ տաքնայ: Սակայն ինք տաք-  
նալոյ ժամանակ զրացիներն ալ տաքցնել  
սկսեր էր, և եթէ շուտ վայ չհասնէին  
տունը հրոյ ճարակ սկսի ընէք:

Անմէշապէս զինքն արգելանոց մի զրեր  
են որ զգաստանայ, ուր երկորդ ճար-  
տարութիւն մըն ալ հոն զործաղը է :  
Թաշկինակը (մէնստիլ) չուանի պէս ուրուեր  
և մէկ ծայրն օդակ շնելով վիզնանցնելէն  
յետոյ, հոն գտնուած տաշտին վրայ  
ենելով միւս ծայրն ալ կամարին երկամ  
ձողին կապեր և սկսեր է ստիւրը տաշտն  
անդին քշէլ: Այս դլրդինէն պահապան-  
ները հասեր և զինքը կէս խեղդուած զտեր  
են, որ ոչ սակաւ դժուարութեամբ խելքը  
զլուկն եկեր է: Գինեմոլութիւնն ասկէց  
աղէկ արգիւնք երբ ունեցած է:

## ԲԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԱՐ

ՆՈՐ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԴԻՆՅԱԶՈՒՆՔ  
Մարք Պօչարիսին անունը ան անուններէն մէկն  
է, զրոնք յոները ամենամեծ պարծանքով կ'արտա-  
սանեն: Որդի Քիչոս Պօչարիսին, զր Սուլիի պատե-  
րազմին առջի դէպերուն մէջ տեսներ, ծնաւ 1788ին,  
և իր պատանեկութեան մէկ մասը անցուց Վունկա-



